# Արձանագրություն 4

**«Արմավիր» ՋՕԸ-ի կարիքների համար «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով գարնանային նախապատրաստական աշխատանքների ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ փետրվարի 21-ին ժամը 10:00--ին:

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ջ. Մկրտչյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Գևորգյան

Հ. Գևորգյան

*Հանձնաժողովի քարտուղար՝* Ֆ. Մանգյան

<u>Օրակարգ</u>

<u>*Հայտերի բացման և գնահատման նիստի մասին*</u>

<u>*1. Հայտերի բացման և գնահատման նիստի մասին*</u>

1.1 «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից թղթային եղանակով կազմակերպված **ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5** ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի բ/ ենթակետի անցկացվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ հետևյալ չափաբաժինների մասով սույն թվականի փետրվարի 21-ին ժամը 10:00--ին:

<u>*2. Գների նվազեցման շուրջ բանակցությունների արդյունքների մասին*</u>

| Մասնակցի անվանումը | Ինքնարժեք բանակցությունններից առաջ ՀՀ դրամ | Շահույթ բանակցությունններից առաջ ՀՀ դրամ | ԱԱՀ բանակցությունների ց առաջ ՀՀ դրամ | Ընդհանուր գին բանակցություններից առաջ (ներառյալ ԱԱՀ) | Նվազեցված Ինքնարժեք ՀՀ դրամ | Նվազեցված Շահույթ ՀՀ դրամ | Նվազեցված գների ԱԱՀ ՀՀ դրամ | Ընդհանուր նվազեցված գին ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1<br>Մերձափնյա տեղամասի *գարնանային նախապատրաստական աշխատանքներ* | | | | | | | |
| | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կինքվելիք լրացուցիչ համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագրով սահմանված ժամկետում: | | | | | | | |
| «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ | 52 200 000 | 5 800 000 | - | 58 000 000 | 52 200 000 | 0 | - | 52 200 000 |
| «Մ-Գրուպ» ՍՊԸ | 49 185 677 | 6 629 000 | 11 162 936 | 66 977 613 | 49 185 677 | 6 629 000 | 11 162 936 | 66 977 613 |
| «Երվադա» ՍՊԸ | 5 500 000 | 1 000 000 | 1 300 000 | 7 800 000 | - | - | - | - |

*Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:*

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

<u>*5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.*</u>

5.1 «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով գնման ընթացակարգի 1 - ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում «Մաքրության աշխատանքներ» ՍՊԸ -ն:

5.2 «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի փաստաթղթերում առկա էր

անհամապատասխանություն՝ մասնավորապես ներկայացված չէր մասնակիցների կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքները և տրամադրվել էր 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունը շտկելու համար՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը: «Երվադա» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից լրացված Թերությունների ակտերի բացվածքը: Ուստի «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել և տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ/ ենթակետի:

5.3 «Արմավիր» ՋՕԸ -ի կողմից կազմակերպված «ԱՐՄ ՋՕԸ-ԳՀԱՇՁԲ-20/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանվում է 5 օր անգործության ժամկետ:

5.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Զ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Կ. Գևորգյան

____________ Հ. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Ֆ. Մանգյան